16 հուլիսի 2024թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՄԻ ՇԱՐՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՕՐՎԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել Հայաստանի այսօրվա քաղաքական միջավայրի մի շարք հիմնախնդիրների լուծումները, որոնք կարող են նպաստել երկրում քաղաքական և հասարակական բևեռացման մեղմմանը:

Փաստաթղթի թիրախում երկու հիմնախնդիր է. 1. մեկ քաղաքական ուժի գերիշխանությունը, որի հիմքում ընկած են Ազգային ժողովի ձևավորման «կայուն մեծամասնության» սկզբունքը, ընտրությունների երկրորդ փուլը, ընտրությունների արդյունքները փաստացի աղճատող բոնուսների համակարգը, կոալիցիաների կազմման սահմանափակումները. 2. Ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմնի բարեվարքության խնդիրը, որոնց առանցքում Ազգային ժողովի պատգամավորների համար մշտական սկզբունքներով գործող էթիկայի հանձնաժողովի բացակայությունն է և անհատական պատասխանատվության բացը:

ՀՀ Սահմանադրության համաձայն այս խնդիրների լուծումը ՀՀ Ազգային ժողովի իրավասությունների տիրույթում է, և դրանք կարող են հնարավորինս սեղմ ժամկետում հասցեագրվել սահմանադրական փոփոխությունների միջոցով՝ մինչև 2026 թվականը:

Հիմնախնդիրները ֆ դրանց պատճառները

2015 թվականի դեկտեմբերին խնդրահարույց գործընթացներով փոփոխված Սահմանադրությունը կիսանախագահական կառավարման համակարգը փոխարինեց մի համակարգով, որը խորհրդարանական է՝ իր ձևով, սակայն իր բովանդակությամբ և առանցքային քաղաքական ինստիտուտների կառուցվածքով համահունչ չէ խորհրդարանական ժողովրդավարության էությանը: 2018 թվականին երկիրը ղեկավարող քաղաքական ուժի շարժառիթն ակնհայտ էր՝ վերարտադրել իշխանությունը ընտրությունների արդյունքում խորհրդարանում քաղաքական կայուն մեծամասնություն և փաստացի քաղաքական մենաշնորհ ապահովելու, քաղաքական ընդդիմության շանսերը չեզոքացնելու, իշխանության ճյուղերի փոխզսպման և հակակշռման մեխանիզմները վերացնելու, գործադիր իշխանությունը կառավարության (վարչապետի) գրասենյակում կենտրոնացնելու միջոցով՝ ի վերջո երկարատև և անցնցում իշխանություն երաշխավորելու նպատակով: Ակնհայտ էր, որ տվյալ համակարգը ունակ էր կարճ ժամանակահատվածում կոնսոլիդացնել և ամրապնդել միահեծան ու ավտորիտար իշխանություն ցանկացած քաղաքական ուժի կողմից:

Խնդրահարույց հանրաքվեով անցկացված սահմանադրական փոփոխությունների արդյունքում հիմքեր դրվեցին իշխանության շարունակական վերարտադրության ու կոնսոլիդացման համար ինչպե՛ս համապետական, այնպե՛ս էլ տեղական մակարդակներում. մասնավորապես՝ հանվեց պետության ղեկավարի պաշտոնի համար նախատեսված ժամանակային սահմանափակումը, հաշվետվողականության հնարավորությունները՝ պայմանավորված համապետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների թվի և հաճախականության

նվազմամբ:[1] Չեզոքացվեցին գործող նախագահական համակարգի հաշվետվողականության մեխանիզմները՝ չստեղծելով բավարար որակի նոր մեխանիզմներ: Մասնավորապես՝ Ազգային Ժողովի վերահսկողական գործիքակազմը թույլ է, Նախագահի լիազորությունները գրեթե բացառապես արարողակարգային են, երաշխավորված չէ խորհրդարանական փոքրամասնության դերակատարումը և արդյունավետ չեն նրա՝ կառավարության գործունեության նկատմամբ վերահսկիչ գործառույթի իրականացման մեխանիզմները և այլն: Ինչպես ցույց տվեց 2018 թվականի ժողովրդական հեղափոխությունը, Հայաստանում սահմանադրական փոփոխություններով նախատեսված մենիշխան կառավարման կայունությունը երաշխավորված չէր:

Իրականում, փորձագետների կարծիքով, մենիշխան կառավարման մոդելն ավելի խոցելի ու կոնֆլիկտածին է: Քաղաքական ճգնաժամերն ու անկայունությունը ավելի հավանական են հենց այսպիսի համակարգերում, որտեղ կառավարումից դուրս մնացած ուժերը զրկված են հանրային քաղաքականության վրա ազդելու գործնական լծակներից և իշխանությունների հետ դրանց վերաբերյալ իմաստալից երկխոսության, կոմպրոմիսների հանգելու և գործակցելու հնարավորությունից: Իշխանության ամբողջ ծանրությունը գերկենտրոնացնելով միայն մեկ՝ հաղթող ուժի ձեռքերում ու բացառելով ներիշխանական ընդդիմության հետ բանավեճը՝ կառավարողի հանդեպ դժգոհությունը կամ անհամաձայնությունը կարող է դուրս գալ ֆորմալ իշխանական հարթակներից և լուծումներ փնտրել այլուր, այդ թվում՝ ընդվզման և անհնազանդության միջոցով: Խորհրդարանական ժողովրդավարական կառավարման համակարգին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող նման համակարգում էականորեն ավելի բարձր են նաև իշխանության չարաշահման, կոռուպցիայի, հայեցողական ու չհիմնավորված որոշումների կայացման, անհաշվետու կառավարման, հանրային միջոցների վատնման ռիսկերը:

Միջազգային փորձն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ միայն խորհրդարանական կառավարման համակարգին ներկայացվող բոլոր պահանջների, պատշաճ երաշխիքների և զսպումների ու հակակշիռների մեխանիզմի առկայության դեպքում է հնարավոր պետական կայուն և արդյունավետ կառավարում: Ուստիև վերը նշված բոլոր խնդիրները սահմանադրական բարեփոխումների ընթացքում պահանջում են համընդգրկուն լուծումներ: Այդուհանդերձ, ժողովրդավարական ինստիտուտների կայացման, քաղաքական մրցակցության, երկխոսության ու մշակույթի զարգացման, քաղաքական հաշվետվողականության բարձրացման ու հասարակության բևեռացման մեղմման նպատակով առաջնահերթ և առանցքային է մի քանի հիմնախնդիրների լուծումը: Դրանք են.

1. ՀՀ Ազգային ժողովում մեկ քաղաքական ուժի կայուն գերիշխող կարգավիճակի վերացումը և իշխանության առավել ներառական համակարգի ձևավորումը,
2. ՀՀ քաղաքացիների ներկայացուցչական մարմնում ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների հարգանքի վրա հիմնված և պատասխանատու վարքագծի հիմքերի ստեղծումը:

Այս խնդիրների լուծման գործիքը ՀՀ սահմանադրության գործող կարգավորումներով գտնվում է ՀՀ Ազգային ժողովի իրավասությունների տիրույթում, և ներկայումս համապետական հանրաքվե կազմակերպելու աննպատակահարմարության պայմաններում ՀՀ Ազգային ժողովի

[1] Ի տարբերություն Սահմանադրության նախորդ խմբագրության՝ 2015 թ. Սահմանադրությամբ համապետական ընտրությունները այլևս սահմանափակվում են միայն խորհրդարանական ընտրություններով և տեղի են ունենում հինգ տարին մեկ անգամ: Տեղական ինքնակառավարման մարմինները ընտրությունները, որ նախկինում անցկացվում էին երեք տարին մեկ, այժմ ևս տեղի են ունենում հինգ տարին մեկ անգամ:

պատասխանատվությունն է՝ հնարավորինս սեղմ ժամկետներում լուծում տալ վերոնշյալ առանցքային հիմնախնդիրներին՝ կանխելու քաղաքական մշակույթի հետագա վատթարացումը, ատելության խոսքի տարածումը, հասարակության բևեռացումը և քաղաքական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության հետագա անկումը:

Առաջարկվող փոփոխությունները

1. Ընտրակարգի բարեփոխում

Նպատակը՝ ընտրական համակարգում հրաժարվել «կայուն մեծամասնության» հիման վրա դոմինանտ իշխանություն ձևավորելու մեխանիզմից, խթանել քաղաքական երկխոսությունը ֆ գործակցությունը:

Գործող Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է. *«Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:*

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենսգրքի 96-րդ հոդվածով նախատեսված է ընտրությունների արդյունքների որոշակի աղճատում՝ լրացուցիչ մանդատների (բոնուսային) համակարգ առնվազն 54 տոկոս[2] (կայուն մեծամասնություն) ապահովելու, ինչպես նաև առնվազն 1/3 փոքրամասնություն ունենալու համար: Ընտրական օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասը, շարունակելով ժողովրդավարության չափանիշներին չհամապատասխանող և խորհրդարանական կառավարման սկզբունքներին հակասող իրավակարգավորումների տրամաբանությունը, նախատեսում է. *«Ընտրության երկրորդ փուլին մասնակցում են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի»:* Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է. *«Ընտրության երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շուրջ կարող են ձևավորվել նոր դաշինքներ՝ կազմված արգելապատնեշները հաղթահարած կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), եթե նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ»:* Նույն հոդվածի 6-րդ մասով՝ ընտրության երկրորդ փուլում հաղթող քաղաքական ուժին տրամադրվում են լրացուցիչ մանդատներ՝ կայուն մեծամասնություն ապահովելու համար:

Փաստորեն, Ընտրական օրենսգրքի 98-րդ հոդվածով ամրագրվում են Ազգային ժողովի երկփեղկման, առճակատման ու ավտորիտար կառավարման հիմքերը՝ սահմանափակելով ընտրությունների երկրորդ փուլում քաղաքական կոալիցիաներ ձևավորելու հնարավորությունը, ամրապնդելով դոմինանտության սկզբունքով կառավարելու հիմքերը և նվազեցնելով քաղաքական երկխոսության ու գործակցության հնարավորությունը: Այս մոդելը իշխանությունն ամբողջովին կենտրոնացնում է մեկ՝ հաղթող ուժի ձեռքերում, մյուս հավակնորդներին փաստացի զրկելով հանրային քաղաքականության վրա իմաստալից ազդեցության լծակներից: Այն ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել հասարակության տարբեր խմբերի պառակտմանը և առճակատմանը, ինչը խիստ ռիսկային է

[2] ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թ. մայիսի 7-ին ընդունված փոփոխությունների համաձայն 54-ը փոխարինվել է 52-ով:

Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Ի վերջո՝ քաղաքական ցածր մրցակցությունը կարող է առաջացնել քաղաքական ու տնտեսական լճացում՝ դրանց բնորոշ հատկանիշներով՝ կառավարման ցածր որակ, կոռուպցիա, տնտեսական անկում և հասարակական ապատիա: Մինչդեռ, ժողովրդավարական և տնտեսական զարգացումը պահանջում են մտքերի, տեսլականների բախում, նոր՝ համարձակ հայեցակարգերի ներմուծում, և հակակշիռների գործարկում:

«Կայուն մեծամասնության» կամ «մեծամասնության դիկտատուրայի» սկզբունքով գործող հայաստանյան մոդելը շատ առումներով հակասում է ժողովրդավարության ժամանակակից պատկերացումներին, որոնք խարսխված են ոչ թե մեծամասնության գերիշխող դիրքի, մեծամասնության կամքը ամեն գնով լեգիտիմացնելու վրա, այլ հակված են բոլոր միջոցներով խթանել մեծամասնության ու փոքրամասնության միջև երկխոսությունը, քաղաքական բանավեճը:

Ժողովրդավարական չափանիշներին համապատասխանող և ժողովրդավարական արժեքների վրա հիմնված սահմանադրությունը պետք է հնարավորություն ընձեռի փոքր կուսակցություններին, որպեսզի ապահովվի ժողովրդավարության համար կենսական մրցակցությունն ու քաղաքական հակակշիռների գործողությունը՝ ուղղորդելով քաղաքական ուժերը դեպի երկխոսություն և բանակցություն, գործակցային հարաբերություններ և փոխզիջումային լուծումներ՝ այդպիսով նպաստելով քաղաքական համակարգի առողջացմանը և մշակույթի զարգացմանը Հայաստանում:

Ժողովրդավարական չափանիշներին համապատասխանության տեսանկյունից առավել ընդունելի է համայնքային ընտրությունների ժամանակ մանդատների բաշխման մոդելը, որտեղ երկրորդ փուլ չի նախատեսվում, իսկ մանդատների բաշխումն արտացոլում է ընտրությունների արդյունքները՝ ըստ քաղաքական ուժերի ստացած ձայների համամասնության[3] և հաղթողին չի տրվում առավելություն՝ հակառակ ընտրություններին մասնակցած քաղաքացիների կամքի:

Կայուն մեծամասնությունից հրաժարումը կենթադրի երկրորդ փուլի վերացում, բոնուսային համակարգի վերացում, կառավարության ձևավորման ձևաչափի վերանայում, հանրային տրամադրությունների ճշգրիտ արտացոլում, հասկանալի գործընթացներով կառավարության ձևավորում, ինչն էլ իր հերթին կդնի առավել ներկայացուցչական, ներառական և ժողովրդավարական Ազգային ժողովի հիմքը:

2. Պատգամավորական էթիկայի խթանում

Նպատակը՝ խթանել Ազգային ժողովի պատգամավորների բարեվարքությունը, ապահովել ժողովրդավարության, օրենքի գերակայության ֆ մարդու իրավունքների հարգանքի վրա հիմնված էթիկայի միջավայր:

[3] Եթե երեք և ավել կուսակցություններ են մասնակցել ընտրություններին, սակայն նվազագույն քանակի կողմ քվեաթերթիկներ ստացել են երեքից պակաս թվով կուսակցություններ, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները: Ըստ նույն մոդելի, եթե ընտրությանը մասնակցել է 2 կուսակցություն, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են այդ 2 կուսակցությունները: Իսկ մանդատների հստակ թիվը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝ յուրաքանչյուր ընտրական ցուցակին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է ընտրական ցուցակներին հասանելիք մանդատների թվով, արդյունքը բաժանվում է մանդատների բաշխմանը մասնակցող ընտրական ցուցակներին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա, և առանձնացվում են ամբողջ թվերը, որոնք յուրաքանչյուր կուսակցության ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվերն են: Իսկ մնացած մանդատներն ընտրական ցուցակների միջև բաշխվում են ըստ մնացորդների մեծության հերթականության՝ յուրաքանչյուրին մեկական մանդատ սկզբունքով:

ՀՀ Սահմանադրության 106-րդ հոդվածով նախատեսված է, որ *«1. Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով: 2. Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ»:* ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածով նախատեսված է. *«Առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ»:*

«ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդված 16-ով սահմանվում է, որ *«4. Ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին Ազգային ժողովի որոշմամբ սահմանվում են հանձնաժողովի անվանումը, գործունեության ժամկետը, ինչպես նաև նրա իրավասությանը վերապահված նախագծի կամ պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ եզրակացությունների ներկայացման ժամկետները»*, և *«7. Պատգամավորական էթիկայի հարցով ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը մինչև երկու ամիս է, որը կարող է հարցի քննարկումն ավարտելու նպատակով մինչև մեկ ամսով երկարաձգվել հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ»*: Նույն օրենքի հոդված 19-ով, ի լրումն գործունեության ժամկետն ավարտվելու, լուծարվելու կամ նրա իրավասությանը վերապահված նախագիծն ընդունվելու կամ շրջանառությունից դուրս գալու այլ դեպքում *«3. Պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովի լիազորությունները դադարում են նաև հետևյալ դեպքերում. 1) պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողով ներկայացվելու պահից. 2) այն պատգամավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքում, որի վերաբերյալ հարցը հանձնաժողովը քննում է»*:

Պատգամավորական էթիկայի նորմերի խախտումների առանձին դրվագներով ժամանակավոր հանձնաժողովի ձևավորման որևէ դեպք 2018 թվականից ի վեր Հայաստանում առկա չէ քանի որ դա քաղաքական որոշում է ԱԺ քաղաքական ուժերը ակնհայտորեն չեն ցանկացել հետամուտ լինել ո՛չ իրենց թիմակիցների և ո՛չ էլ այլ խմբակցությունների պատգամավորների էթիկայի կանոններին չհամապատասխանող, հանրայնորեն պարսավանքի առարկա դարձած տարբեր վարքագծերին: Պատգամավորական էթիկայի ինստիտուտը չի գործում, ինչի արդյունքում պատգամավորների մասնակցությամբ բազմաթիվ խնդրահարույց դրվագներ (ծեծկռտուք, հայհոյանք, այլ) չեն ուսումնասիրվել, չեն ստացել պատշաճ գնահատական և, ըստ էության, կոծկվել են՝ առանց որևէ հետևանքների: Արդյունքում, փաստորեն, խրախուսվել է դրսևորված վարքագիծը և հիմքեր ստեղծել նման դեպքերի կրկնողության ու հասարակության այլ հատվածներում նման վարքագծի տարածման համար: Միևնույն ժամանակ, հիշատակված դրվագները ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ միջազգային զեկուցներում ու բացասական են անդրադարձել պետության գնահատականի[4] և հետևաբար՝ նաև Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության վրա: Սա զգալի հարվածի տակ է դրել ԱԺ վարկանիշը և, ամենայն

[4] Freedom House, Nations in Transit 2024: Armenia, 2024, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024

հավանականությամբ, նպաստել է այս կարևորագույն կառույցի նկատմամբ հանրային վստահության անկմանը:[5]

Օրվա հրամայական է ԱԺ պատգամավորների գործուն էթիկայի հանձնաժողովի ձևավորման համար հիմքերի ստեղծումը, ինչը պետք է անել հաշվի առնելով այս մարմնի առանձնահատկությունները և ձևավորված քաղաքական միջավայրը: ԱԺ էթիկայի հանձնաժողովի ձևավորումը չպետք է լինի դրվագային և կախման մեջ դրվի քաղաքական նպատակահարմարությունից: Համապատասխանաբար, այն չպետք է ձևավորվի իրավիճակով պայմանավորված և կոնկրետ պատգամավորական նախաձեռնության հիմքով: Այն պետք է ձևավորվի և գործի մշտական և կայուն հիմունքներով: Միևնույն ժամանակ այս հանձնաժողովի ձևավորումը պետք է տարբերվի այլ մշտական հանձնաժողովներից՝ հաշվի առնելով լիազորությունների և գործառույթների առանձնահատկությունները: Դրանում ընդգրկված մեծամասնության խմբակցության (խմբակցությունների) անդամների ընդհանուր թիվը պետք է հավասար լինի ընդդիմադիր խմբակցության (խմբակցությունների) անդամների ընդհանուր թվին: Ցանկալի է, որ էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնը որոշակի պարբերականությամբ հաջորդաբար վերապահվի մեծամասնության և փոքրամասնության պատգամավորներին:

Թեև Եվրոպայի Խորհրդի ԳՐԵԿՈ-յի առաջարկները բավարարելու նպատակով որպես սահմանադրական խոչընդոտը շրջանցելու տարբերակ ներկայում քննարկվում է ԱԺ պատգամավորական էթիկայի հանձնաժողովի ձևավորումը յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում՝ տվյալ նստաշրջանի ժամանակահատվածում գործունեություն ծավալելու նպատակով, դա կարող է միայն դիտվել որպես միջանկյալ լուծում՝ մինչև Սահմանադրական փոփոխություն իրականացնելը և պատգամավորների էթիկայի հանձնաժողովի հատուկ և ավելի ճկուն կարգավիճակով սահմանադրական հիմքի ամրապնդումը:

Ի լրումն այլ առանձնահատկությունների՝ ԱԺ պատգամավորների էթիկայի հանձնաժողովը պետք է հնարավորություն ունենա հաղորդումներ ստանալու քաղաքացիներից, մամուլից, հանրության այլ շերտերից, պատգամավորի բարեվարքության պահանջների խախտման վերաբերյալ, իսկ խախտում արձանագրելու դեպքում՝ կարող է առաջարկել Ազգային ժողովին համապատասխան պատգամավորի նկատմամբ կիրառելու օրենքով սահմանված կարգապահական միջոց, որն ապագայում կկանխի բացասական երևույթների կրկնումն ու տարածումը:

Էթիկայի հանձնաժողովի սահմանադրական հիմքերը վերանայելուց հետո, դրա կազմավորման և գործունեության մյուս մանրամասները հնարավորինս շուտափույթ պետք է սահմանվեն Ազգային ժողովի կանոնակարգով:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
«Հանուն հավասար իրավունքների» ՀԿ
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
«Հանրային լրագրության ակումբ» ՀԿ
«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

[5] Միջազգային հանրապետական ինստիտուտ, Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն. դեկտեմբեր 2023, March 11, 2024, https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-december-2023